

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ

գործող գներով, մլն. դրամ

	1995	1996	1997	1998**
Ընդամենը ՀՀ*	172048.2	229570.4	254315.6	260136.2
<i>այդ թվում՝</i>				
ք. Երևան	78936.2	90739.8	99766.9	112425.0
Արագածոտն	509.4	2676.8	3916.3	4214.5
Արարատ	4720.0	11336.1	12887.1	12859.2
Արմավիր	8115.5	26855.2	29009.9	24102.9
Գեղարքունիք	4705.0	9847.7	10573.8	8178.2
Լոռի	6152.2	12484.7	12505.4	13824.1
Կոտայք	45332.2	48218.9	55864.9	53878.3
Շիրակ	4833.5	10306.9	9737.3	9832.3
Սյունիք	17249.8	11835.5	13359.3	14274.8
Վայոց Ձոր	552.2	1931.5	2689.2	2513.6
Տավուշ	942.2	3337.3	4005.5	4033.3

*) ներառյալ այլ (ոչ արդյունաբերական բնույթի) տնտեսվարող սուբյեկտների կողմից թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալի գնահատականը:

***) տվյալները նախնական են:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ

մլն. դրամ

	1995*	1996*	1997*	1998**
Ընդամենը ՀՀ*	74031.1	98087.5	108902.3	134671.2
<i>այդ թվում՝</i>				
ք. Երևան	36069.7	42644.6	52332.4	68190.4
Արագածոտն	398.7	1428.8	2233.9	3325.8
Արարատ	3251.8	5638.1	5683.2	8081.0
Արմավիր	3442.1	5378.7	5792.6	6329.3
Գեղարքունիք	2167.5	3353.6	3767.5	5077.7
Լոռի	4810.6	6566.3	7124.1	8271.8
Կոտայք	15874.6	20946.0	18980.6	18540.8
Շիրակ	4397.9	5873.6	4834.6	7508.2
Սյունիք	2336.9	2825.3	3787.4	3709.1
Վայոց Ձոր	554.1	1569.5	2157.6	2178.2
Տավուշ	727.2	1863.0	2208.4	3458.9

*) ներառյալ այլ (ոչ արդյունաբերական բնույթի) տնտեսվարող սուբյեկտների կողմից թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալի գնահատականը:

***) տվյալները նախնական են:

Հայաստանի Հանրապետությունը բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր է: Արդյունաբերությունը (այստեղ արտադրվում է ՀՆԱ-ի գրեթե 1/4-ից ավելին և զբաղված են աշխատողների ընդհանուր թվաքանակի 20 %-ից ավելին) երկրի տնտեսության, ազգային եկամտի արտադրության, բնակչության զբաղվածության գլխավոր ոլորտներից է:

1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ողջ ծավալում առավել մեծ տեսակարար կշիռը կազմել է մետալուրգիական արդյունաբերության՝ 59.4%, անտառային, փայտամշակման, ցելյուլոզի և թղթի (14.5%), թեթև (13.1%), շինանյութերի արդյունաբերության (5.8) և էներգետիկայի (0.1%) ձեռնարկությունների արտադրանքի բաժինը և այլն:

1998թ. արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը 1997թ. համեմատությամբ նվազել է 7.8 %-ով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալի կազմում ներառվում են պարենային և ոչ պարենային ապրանքները (թեթև արդյունաբերության, մշակութա-կենցաղային և տնտեսական նշանակության ապրանքները), ալկոհոլային խմիչքների արտադրությունը (ներառյալ գարեջուրը): «Սպառողական ապրանքներ» ցուցանիշի մեջ մտնում են ինչպես սննդի, թեթև արդյունա-բերության, այնպես էլ երկարատև օգտագործման ապրանքները, ինչպես նաև բնակչությանը վաճառքի համար մատակարարվող արտադրատեխնիկական արտադրանքը և ձեռնարկու-թյունների դրամարկղների միջոցով բնակչությանն անմիջականորեն իրացումը:

Հանրապետությունում սպառողական ապրանքների արտադրության ֆիզիկական ծավալի ինդեքսը 1998թ. 1997թ. համեմատ կազմել է 102.6 %, ընդ որում, պարենային ապրանքներինը՝ 105.9 %, ոչ պարենային ապրանքներինը՝ 110.1% և ալկոհոլային խմիչքներինը՝ 76.7 %: